ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՀԱՆԴԷՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ (1565)

ՏԱՂ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ԳԵՂԵՑԻԿ

Եկայք Ադամայ որդիք արարածք ամէն միաբան,
Օրհնեմք զարարիչն Աստուած՝ որ ստեղծեաց զէակս ամենայն.
Որ է ինքն անեղ բնութիւն սուրբ Երրորդութիւն միական,
Զարդարեաց իմաստութեամբ զբոլոր բնութիւնս ամենայն.
Ստեղծեաց զԱդամ՝ նախնին թագաւոր և եա պատուիրան՝
Թէ յամէն ծառոյ կեր ու՝ի միոյն չուտես հրաման։
Օձն էր կորստեան պատճառ, բանսարկուն էր աւիթ մահուան,
Խաբեցին զձեռագործն՝ արարին մահու դատական։
Հրաման առին յարարչէն և ելին պատճառ չինութեան,
Ուստերս և դստերս ծնան, գնահապետըն զամենեսեան։
Ելեալ հրաման յԱրարչէն՝ բաժանել զլեզուքն ամենայն,
Եւ ամեն լեզուաց բաժին 'ի յաշխարհս չորեքանկեան։
Եւ բաժին Քամայ ազգին վիճակաւ գաւառք բազմական
Ցայտնի ն՝անծանօթ աշխարհք զոր գիտակն է իմաստութեան։
Նախ սկիզբն առնեմք նորա՝ որ քաղաք է հիւսիսական.
Բուլղար կու ասեն նըմա՝ որ ելնէ սամուրք աննման.
Եւ այլ 'ի կարգի նորա՝ որ անկանի կողմ յարեւելեան.
Խըլթայ ու խութայ ասեն՝ որ է Թախտ ազգին Լակըզստան։
Եւ այն ընտիր աշխարհք, մեծամեծ քաղքունայք որ կան,
Բաշխ ու Պատաշխ ասեն՝ որ բերեն զլաճվարդ աննման։
Ելնեմք ընդդէմ դրախտին զոր մարդիկք դժար մտանեն,
Որ Չինումաչին կոչի, և կազմեն զդեղթափ Չինիստան։
Եւ այլ 'ի ներքին կողման՝ որ ասի չորրորդ Հինդուստան.
Քաբուլ Ղանտահար ասեն տիրեալ է ազգըն հազարեան։
Ի յայն կոյս ծովուն միջին են բնակեալ լեզուք զանազան,
Թախտ ունին զՊէճանակալ՝ որ ասի խորու Հնդուստան։
Լալ ու գոհար անդ լինի և քարինք անգին պատուական,
Զոր բերեն մարդիկք յաշխարհս, թագաւորք 'ի վրան խնդան։
Են ազնիւ նախնեաց նոցին վիճակաւ ազգ եթովպական.

digitised by A.R.A.R.@

Եւ Աստուած պարգև նոցա զոսկին ազնիւ բուսական։
Հաւատով են քրիստոնեայք և գործովք ուղղափառութեան
Ի Փիլիպոսի չնորհացրն՝ որ ընտրեալ են ուղղադաւան։
Եկայք որ մընունք յաչխարհն որ է կողմն հարաւայեան,
Թախտ ունին նորա զթաւնօզ, աշխարհաւ են Մաղրիպաստան.
Ցառաջն էին ձկնակերք և անկուշտ մարդադէմ գազան,
Այժմ են խիստ քաջ ըռամալ և ազգաւ են մահմետական։
Ի գլուխ նոցին բնակեալ են Մաչրիպք՝ որ է խուժաստան,
Թախտ ունին զկրաօնայ, վիճակաւ են ամաղուշեան.
Կին է նոցա թագաւոր՝ զոր ատեաց մակեդոն արքայն.
Խարաճ տան փոռթուկալին՝ որ բնակեալ է անդրանդլական։
Հրաման առնեն այն ծովուն որ բնակեալ է Լեւիաթան,
Նաւավարք են քաջ գիտուն՝ որ առին զչիմուզ կղզին այն.
Ցայտնեցին զոսկոյն քաներն 'ի սինուռքն Հապաշրստան,
Մտան 'ի փէքով քաղաքն, տիրեցին բոլոր Հնդուստան։
Ի ներքոյ հրգմի նոցին բնակեալ են ռաեբք եթովպական,
Նապիք և Սիահք ասեն քաւթայբայք աշխարհ հեռաստան։

Վ.ՀԱՐԵՑԱՒ ՊԻՏԱԿ ԳԱՍԱՑ, ՑԱՏՍՏՀԵՏԷ ՊԻՏԱԿՆ Է ՍՍՏԱՑ

Անեղ անսկիզբն Աստուած, որ միշտ է ինքն անսահման,
Եւ բաժին Սեմայ ազգին զվիճակքն Ֆրռանկըստան։
Անդ են բնակեալ լեզուք, թագաւորք արևմրտական
Անթիւ ա'նհամար զօրք ա'ըսկիզբնէ են արիական։
Այժանաժառանգ ունին թագաւոր ըսպանիական,
Աբքայից մեծաց թագաւոր զոր կազմեաց Սողոմոն արքայն։
Այժմին փառաւոր էին 'ի բունէդ աշխարհն ամենայն,
Հնդանդ եղեալ նմա թագաւորքն Լատին և մեծն Ալաման։
Հարկատու արարին զվէնէժ, ճէնեայ և Անքունիայն,
Առին զՊոլոնիայ և հասին 'ի մեծքն Միլան։
Զփարէզ քաղաք թախտ ունի և զմեծ կղզին զՍիցիլիան,
Ինքքն փրկէ զքրիստոնեայքն 'ի յազգէս այս մահմետական։
Եւ այլ 'ի կարգի նոցա է բնակեալ ազգ կատալեան,
Թախտ ունին զՖլանատրայ՝ որ եղեայ զարինճայ չուխայն։
Ի կարգի նոցա անկանի Սամարգին և ազգն Նիցման
Զոր փիլիացիք ասեն՝ որ յայտնի է Պանփուլիան։
Գլուխ քրիստոնէից քաղաքաց՝ մայրն ըստուգական
Զոր Հռոմ ասեն նմա, է ամենա հայրապետական։
Անդ են բնակեալ գլուխ առաքեալքն՝ որ վէմ կոչեցան,
Անթիւ քահանայք բազում՝ սպասաւորք եկեղեցական.
Եւ Պապն 'ի նոցա միջին՝ որ է գլուխ թագաւորութեան,
Եպիսկոպոսունք ընտրեալք և երկոտասան կարտինայն։
Կարդաւորք առաքինիք և սուրբանայք են խորհրդական,
Տիրեն մեծամեծ կղզեաց, Ֆռանկ է նոցա պահապան։
Ամուր կղզիք մեծամեծք՝ կրիտէս ա'Ակրականտիան,
Բռօտոս և մեծըդ Կիպրոս, ձեզ գլուխ է Ցօպրոնիքան։
Ի յԱթենացւոց աշխարհն՝ որ ասի թեսաղոնիկանն,
Ֆարարենցս Աւլոնիան մեծ քաղաք Անապոլիսն այն։
Թագաւոր է յաչխարհիս մեծ հզոր Ֆռանցա արքայն,

digitised by A.R.A.R.@

Ի թոռանց մեծաց թագաւոր Կոստանդեայ կոստանդին արքայն։
Ի մուտս արևու այլ կան Անկլեզուք Ընկլիթեռ արքայն,
Բնակեալ է 'ի յայն ծովուն որ հանեն ոչխան ակռայն։
Ի Բիւթանացւոց աշխարհն են անկեալ լեզուք զանազան,
Մաճարք և Գուլղարք ասեն, Լեհն, Սերբ, Խրվաթն և Պոսնայն,
Իլխան և Ֆլախրնկան, 'ի Գրագով աշխարհն ամենայն,
Զաշխարհն ունին սեփական՝ որ հասնի մինչ 'ի Աքիրման։
Ի սահմանիք հիւսիսոյ է Ռուսս ազգն բընական.
Աշխարհքն է նոցա Մոսկով մինչ 'ի ծովն կասպիական։
Եւ ազգին նոցա գերոյ է Թաթարն նետողական,
Լայն և արձակ է անկեալ՝ որ հասնի մինչև 'ի Կաֆան։
Գոռէլն ու Մրկրելն յայսոնքին, Ղազան ու Ցատանիան,
Պաշկուրն 'ի հետ նոցա՝ որ 'ի կողմն 'ի Վրրաստան։

Վ. ՀԱՐԵՑԱՒ ՍԵՄԱՑ ԵՒ ՄՏԱՆԷ ՅԱՌԵԹԱՑ

Երկնի և երկրի ստեղծող, մարդասէր աստուած ինքնական,
Աբեթայ շնորհեաց վիճակ զմիջօրեայ աշխարհս ամենայն։
Սկիզբն յԱսիոյ առնեմք՝ զոր չինեաց Կոստանդին արքայն,
Որ ինքն է օծեալ քաղաք և տեղիք սրբոյ բնակարան.
Այժմ է նա կոխան եղեալ այլազգացն որ մեզ յայսոնի կան
Զոր անուամբ Օսման կոչեն և տիրեն մինչև 'ի Մաքայն։
Տիրեն բոլոր աշխարհիս և ունին բուռն հրաման,
Խրոխտ են և քաջ գիտուն մինչ լինի 'ի տուղէն վաղճան։
Երաժիշտ Թրակացիք՝ զոր յայսոնի այժմ զարաման,
Եւ 'ի հետ Գաղատիայն զնիկիկ և զԵրիայն։
Փիւնիկեցիք և Ասորիք՝ որ ազգաւ են վաճառական.
Օրհնեալ է իմաստութիւնն, որ շնորհեաց զայս թվական։
Գահիրացիք հնարագէտք՝ քաղաքաւ են եգիպտական,
Գտեալ են նոքա զարուեստն որ կոչի երկրաչափական։
Ի Արարիայ մնունք՝ որ հասնի մինչև 'ի ճիտտան,
Ունին զթախտն Եգիպտոս, զԴամասկոս և զկանտարեայն։
Ազգն Երբայեցւոց անդ են Ի'սրայէլ անուն կոչեցան,
Աբրահամ և Իսահակ, նահապետքն երկոտասան։
Յայսոնեցան 'ի յազգէ նոցա մարգարէքն վկայական.
Ի նոցանէ Աստուած ծնաւ, ազատեաց զկոգիքն ամենայն։
Ո'վ Բաբելացիք գիտունք արուեստիւ աստղաբաշխական
Գտեալ էք զմոլորականքն և զընթացս արեգական։
Դուք էք երաժշտական՝ զոր յայսոնեաց Թարայ և Խառան,
Աբրահամ հայրն առաջին որ է սկիզբն աստուածպաշտութեան։
Ի Բաբելոնի կողմանցն է և Պարս և Թայուխ արքայն,
Ի'այլ աշխարհք և այլ գաւառք որ հասնի մինչ 'ի Քալպալան։
Ի Մծբին և 'ի Միջագետս որ աշխարհս է Ասորեստան
Եւ այլ 'ի կարգի նորա զոր յայսոնի ասեն Քրիստոսան։
Մեզ յայսոնի է այն քաղաքն զոր չինեաց գչխոյն Հեղինան,
Անուամբ կոչի նա Գուբրայ՝ որ ինքն է ազնիւ չահրըստան։
Եւ անդի առաջ գորով է Ցունաց աշխարհքն ամենայն,
Զոր այժմ Հռոմք կոչեն, և սինուռն է Սեբաստիան։
Յորդանանաղաց աշխարհքն որ ասի Շիրվան և Թիլան

digitised by A.R.A.R.@

Խառնում տան կղզին մէջին, աշխարհքն է չարին գալստեան ։
Անդ լինի պարգևք մարդկան պատուական և՛ անգին մանանայն ,
Ջանուն ապրիշում՝ ասեն որ գործեն զմախմուրն և զշազման ։
Զազգըն Պարսից յայտնեմք իմաստուն և քաջ գիտնական ,
Ճարտար և հնարագէտ, աշխարհաւ են Հատրպըճան ։
Ի մէջի Նոցա շինեալ է գաւառք և՛աշխարհք զանազան ,
Անդ լինի պղպատ սուսերք՝ որ ասի շիրազ և քիրման ։
Արուեստիւ շինեալ քաղաք, որ մտնան 'ի ձեզ պաղըկանք
Ցանուանէ կոչեալ լինիք զոր յայտնի է ղում և քաշան ․
Պայծառ և ընտիր քաղքուէնայք՝ որ կոչիք Եազտ ու Սպահանք ,
Պարարտ և խիստ վայելուչ աշխարհաւ երաշտական ։
Ազնիւ և անգին ղումաշքն՝ որ լինի 'ի ձեզ գովական
Զարդարանք և պաճուճանք՝ զոր հագնին իշխանք ամենայն ։
Արշակունիք գովելիք և ընտիր 'ի յարևելեան
Պալհաւ հնդիկ կոչեցեալ, աշխարհաւ ես դու Խորասան ։
Տիրեալ ես բազում քաղաք զԹիլան մինչ 'ի Լարըստան ,
Երկրորդ ես ընկերակից Թորգոմայ ազգին հայկազան ։
Ունիս դու բազում հեծել կըռուարար և յոժ փալհաւան ,
Սմրղանդն է քո սինուռն՝ որ է գլուխ քաղաք պատուական ։
Արշակն է շինեալ զքեզ Թագաւոր հրապաշտ արքայն
Եւ է Նա Քէտորացի՝ զոր յայտնի մեզ անգիման ։
Քննեցուք զհայկայ որդիքն որ յամէն ազգէն ցիրուցան ,
Որ ազգաւ Արմէն կոչեն վիճակաւ են Թորգոմական ։
Քաջ Արշակ և Վաղարշակ հարազատ եղբարք միական
Են Աբրահամու որդիք 'ի ծննդոցըն քետորական ։
Եւ էին դայեակորդիք աղքային այն մակեդոնեան ,
Գնեղաւ զնա մահացուցին և առին զտունն արևելեան ։
Վաղարշակ շինեաց զգաւառն՝ որ ասի Նա Այրարատեան ,
Բազում աշխարհք և գաւառք և զթաւրէզ մեծըն շահաստան ։
Սուտ և անցաւոր աշխարհ՝ ուր են մեր իշխանքն ամենայն
Տրդատն հզօր արքայն, պարոնայքն հետ իւր գովական ․
Գովելիք և անուանիք 'ի սկզբանէ մինչ 'ի յաւիտեան ,
Ոչ ոք ձեզ նման եղաւ ոչ յառաջն և ոչ ապագայն ։
Զարթիք և տեսէք զմեր խեղճն և ողորմ և կսկծական ,
Ամէն ազգ իւր վիճակն և եղեալ եմք մեք ցիր և ցան ։
Գերի եմք և՛ողորմելիք և ամէն ազգաց ենք կոխան ,
Ոչ ունիմք մեք Թագաւորք ոչ հզօր զինուոր՝ զօրական ։
Ո՞ւր են առաջին իշխանքն քաջ Մուշեղ և Գայլըն Վահան ,
Պատերազմին մեզ համար և՛ազատեն զդերեալքս ամենայն ։
Վկայեալ են սուրբ հայրապետքն և ուխտիւք մխիթարութեան
Թէ լինի ձեզ ազատութիւն 'ի յազգէն այն արիական ։
Փառք քեզ Թագաւոր փառաց՝ որ քննող ես գաղտնեաց մարդկան ,
Տուեա՛լ ես իմաստութիւն որ քննէն զէակս ամենայն ։
Ի Թիւին հայոց ազգի, Տէր քննէ մինչ 'ի յաւիտեան ,
Հազար և 'ի ԺԴ 'ի ապրիլի ԻԵ լման ,
Ողորմելի Նարապետ վարդապետ և խիստ անպիտան
Հպարտ ես և անամօթ, բանիս ո՜վ ետ քեզ հրաման ։
Աղաչեմք զձեզ, եղբարք, ովք երգէք կարդաւ դուք զայս բան ,
Ցիշեցէք զանարժանս, ողորմի ձեզ Տէրն յաւիտեան ։

digitised by A.R.A.R.@